

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ**

Ուսումնական կենտրոն

Ուսումնական ծրագիր

**Նախնական մասնագիտական կրթության «Ոստիկան»
որակավորման
«Հաղորդակցման հմտություններ» առարկայի դասընթացի**

Քննարկվել և հաստատվել

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի

**ուսումնական կենտրոնի <<Ընդհանուր
պատրաստականություն>> կրթաճյուղի**

01. 06. 2018 թ. № 4 նիստում

ք.Երևան

2018թ.

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

**Նախնական մասնագիտական կրթության <<Հաղորդակցման հմտություններ>>
ատարկայի եռամսյա դասընթացի**

N	Թեմաների անվանումները	Ժամաքանակն ըստ թեմաների	Ժամաքանակն ըստ պարամունքի ձևերի		
			դաս.	գործ.	սեմ.
	2	3	4	5	6
1	Հաղորդակցումը որպես տեղեկատվական գործընթաց	2	2		
2	Հաղորդակցումը որպես փոխադարձ ընկալում	2	2		
3	Կոնֆլիկտների լուծման մարտավարություն	4	2		2
4	Բանակցությունները արտակարգ պայմաններում	2	2		
5	Հոգեբանական ազդեցության մեխանիզմները հաղորդակցման գործընթացում	2	2		
6	Արդյունավետ հաղորդակցման հոգետեխնիկաներ	6	2	2	2
	ԸՆԴԱՄԵՆԸ	18	12	2	4

Կազմեց՝
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի <<Հատուկ պատրաստականություն>> կրթաճյուղի դասախոս, ոստիկանության մայոր
_____ Ն. Նազարյան

Քննարկվել և հաստատվել է կրթահամալիրի ուսումնական կենտրոնի <<Ընդհանուր պատրաստականություն>> կրթաճյուղի նիստում. արձանագրություն թիվ 4, 01.06.2018թ.
կրթաճյուղի պետ, ոստ.փոխգնդապետ
_____ Ա.Ալեքսանյան

1. Դասընթացի ընդհանուր ծավալը ըստ պարապմունքի տեսակների

Ուսումնական պլանին համապատասխան դասընթացի ուսումնասիրման համար հատկացված է 18 ժամ, որից՝

- դասախոսություն- 12 ժամ,
- գործնական - 2 ժամ,
- սեմինար - 4 ժամ,
- ստուգաթղթ - 2 ժամ

2. «Հաղորդակցման հմտություններ» դասընթացի ուսուցման նպատակը և խնդիրները

Առարկայի հիմնական նպատակն է ուստիկանության կրտսեր խմբի պաշտոններում ծառայության անցնելու նպատակով նախնական մասնագիտական կրթություն ստացող սովորողների մոտ ձևավորել մասնագիտական գործունեության ընթացքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու հմտություններ և կարողություններ:

Առարկայի դասավանդման ընթացքում լուծվում են հետևյալ խնդիրները.

1. Տեսական գիտելիքներ հաղորդել արդյունավետ հաղորդակցության հիմնադրույթների վերաբերյալ:
2. Ձևավորել կոնֆլիկտային իրավիճակներում հաղորդակցումը արդյունավետ իրականացնելու ունակություններ և կարողություններ:
3. Ձևավորել և զարգացնել բանակցություններ վարելու հմտություններ և ունակություններ:
4. Ձևավորել և զարգացնել հաղորդակցում իրականացնելու՝ նախաձեռնելու, պահպանելու, անհրաժեշտ տեղեկություններ ստանալու, պարզաբանելու, եզրափակելու հմտություններ և կարողություններ:
5. Ձևավորել և զարգացնել արդյունավետ հաղորդակցման հմտություններ և կարողություններ:

3. Դասընթացի բովանդակության յուրացման մակարդակին ներկայացվող պահանջները.

Սովորողները պետք է իմանան և ճիշտ ներկայացնեն ուստիկանի մասնագիտական գործունեության մեջ հաղորդակցման դերն ու նշանակությունը, բնորոշ առանձնահատկությունները, հաղորդակցման՝ որպես տեղեկատվական գործընթացի յուրատիպությունը, փոխադարձ ընկալման վրա ազդող գործոնները, կոնֆլիկտի լուծման մարտավարությունները, հաղորդակցման ընթացքում հոգեբանական ազդեցության մեխանիզմներին, արդյունավետ հաղորդակցման հոգետեխնիկաներին ու հնարքներին:

Սովորողները պետք է կարողանան՝

1. ներկայացնել հաղորդակցության գործընթացի առանձնահատկությունները,
2. նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ,
3. տիրապետել գրավոր հաղորդակցմանը ներկայացվող պահանջներին,
4. տիրապետել կոնֆլիկտների կառավարման, համապատասխան մարտավարություն կիրառելու, բանակցություններ վարելու հմտություններին,
5. տիրապետել ակտիվ ունկնդրման հնարքներին,
6. տիրապետել հոգեբանական ազդեցության կառուցողական հմտություններին:

4. Կապը ուսումնական պլանով նախատեսված այլ առարկաների հետ

Դասընթացը սերտորեն կապված է ուսումնական պլանով նախատեսված այնպիսի առարկաների հետ, ինչպիսիք են «Ոստիկանության և հասարակության փոխհամագործակցությունը» և «Մանկավարժությունը և հոգեբանությունը ոստիկանի գործունեության մեջ» :

5. Դասընթացի ուսուցման մեթոդական ցուցումներ

Ուսուցումը իրականացվում է դասախոսությունների, գործնական պարապմունքների և սեմինարների միջոցով, որոնք անց են կացվում ինտերակտիվ մեթոդներով: Դասավանդման ընթացքում օգտագործվում են նաև տեխնիկական միջոցներ, տեսանյութեր: Նյութի յուրացմանը մեծապես օժանդակում են դիդակտիկ պաստառները: Գործնական պարապմունքների ընթացքում պրակտիկ վարժությունների, իրավիճակային խնդիր-առաջադրանքների և դերախաղերի միջոցով սովորողների մոտ ձևավորվում են գործնական անհրաժեշտ հմտություններ և ունակություններ, որոնք, տեսական գիտելիքներով ամրապնդվելով, դառնում են առաջիկա արդյունավետ մասնագիտական գործունեության կարևոր պայման: Սովորողներին հաղորդված գիտելիքների և հմտությունների ինտեգրացիան և ամրապնդումը ապահովելու համար ուսուցման արդյունքում անց են կացվում գործնական պարապմունքներ:

6. Ուսումնական նյութի բովանդակությունը

Թեմա-1 Հաղորդակցումը որպես տեղեկատվական գործընթաց:

1. Մասնագիտական հաղորդակցման դերն ու նշանակությունը ոստիկանի գործունեության մեջ
2. Հաղորդակցման կառուցվածքային բաղադրիչները
3. Հաղորդակցման խոսքային և ոչ խոսքային միջոցների բնութագիրը
4. Գրավոր հաղորդակցման առանձնահատկությունները
5. Խոսքի հարալեզվական միջոցներ և մարմնային ոչ լեզվական միջոցներ

Թեմա-2 Հաղորդակցումը որպես փոխադարձ ընկալում:

1. Արդյունավետ ընկալման հոգեբանական մեխանիզմները.
2. Փոխադարձ ընկալման վրա ազդող գործոնները
3. Փոխադարձ ընկալման և հասկացման գործընթացի մեխանիզմներ
4. Ընկալման ճշգրտության վրա ազդող գործոնները.

Թեմա-3 Կոնֆլիկտների լուծման մարտավարություն

1. Կոնֆլիկտների էությունն ու կառուցվածքը.
2. Կոնֆլիկտների տեսակները, առաջացման պայմանները և զարգացման ընթացքը.
3. Կոնֆլիկտի լուծման անհրաժեշտ պայմանները
4. Կոնֆլիկտների լուծման մարտավարությունները:

Թեմա-4 Բանակցությունները արտակարգ պայմաններում

1. Բանակցային գործընթացի էությունը.
2. Բանակցային գործընթացի հիմնական փուլերը
3. Արտակարգ պայմաններում բանակցություն վարելու առանձնահատկությունները
4. Բանակցային գործընթացի արդյունավետությունը բարձրացնող գործոնները.
5. Բանակցային գործընթացի արդյունավետությանը խոչընդոտող գործոններ

Թեմա-5 Հոգեբանական ազդեցության մեխանիզմները հաղորդակցման գործընթացում

1. Հոգեբանական ազդեցությունը հաղորդակցման գործընթացում
2. Համոզման, փաստարկման և հարկադրանքի մեթոդներ
3. Ներշնչում, հուզական վարակ, խնդրանք
4. Հոգեբանական ազդեցության կառուցողական հնարքներ
5. Հոգեբանական ազդեցության ապակառուցողական հնարքներ

Թեմա-6 Արդյունավետ հաղորդակցման հոգետեխնիկաներ

1. Արդյունավետ հաղորդակցման ընթացակարգը
2. Հոգեբանական կապի հաստատում
3. Ունկնդրելու մասնագիտական կարողության էությունը և ոճերը
4. Ունկնդրելու մասնագիտական հնարքներ
5. Անհրաժեշտ տեղեկություններ ստանալու հմտություններ:

Գրականության ցանկ

1. Նազարյան Ն.Ս., Կոնֆլիկտները և դրանց կառավարումը: Երևան, 2016 թ.
2. Նազարյան Ն.Ս. Ոստիկանի մասնագիտական գործունեության և անձի հոգեբանական առանձնահատկությունները: Երևան, 2015թ.
3. Караяни А.Г., Цветков В.Л. Психология общения и переговоров в экстремальных условиях. М., 2014.
4. Носков В.А. Психотехника общения в работе оперуполномоченного службы БХСС: Учеб. пособие. – Горький: 1989.
5. Панкратов В. Н., Культура общения сотрудника органов внутренних дел,.М: 2006г.
6. Пономарев В. П., Психология общения., М: Академия МВД России, 1996г.
7. Прикладная юридическая психология: М.: 2001.
8. Социальная психология: учебник для вузов М.: 2009.